«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

11 Նոյեմբերի 2021, N 6 - 1 (հարցման կարգով)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ԿՐԹԱՁԵՎԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՄԵԿ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 1676-Ն հրամանով հաստատված նոր խմբագրությամբ շարադրված հավելվածի՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում և դրա մասնաճյուղերում առկա և հեռակա կրթաձևերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում սահմանել մեկ կրեդիտի արժեքի հաշվարկման հետևյալ բանաձևը՝ **մեկ կրեդիտը հավասար է կրթական ծրագրի տարեկան ուսման վարձի չափը հարաբերած տարեկան կրեդիտների հանրագումարին (կլորացմամբ և միավորի ճշգրտությամբ)**:

2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2015 թվականի մայիսի 19-ի «Վերականգնվող և տեղափոխվող ուսանողների, ինչպես նաև կրկնակի ամփոփիչ քննություն հանձնողների, ավարտական աշխատանք կամ մագիստրոսական թեզ պաշտպանողների համար մեկ կրեդիտի արժեքը սահմանելու և գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 15-ի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. նոյեմբերի 11
Երևան